



<p><b><u>Հոչակագիր Հայաստանում բիզնեսի էթիկայի և համապատասխանության նախաձեռնության մասին</u></b></p>	<p><b><u>Declaration of Intent for Business Ethics and Compliance Initiative in Armenia</u></b></p>
<p>Մենք՝ որպես Հայաստանի մասնավոր հատվածի անդամ, գիտակցում ենք, որ կոռուպցիան նշանակալի խոչընդոտ է ազատ շուկայի, ինչպես նաև մեր ձեռնարկությունների շարունակական հաջողության համար: Մենք նաև հասկանում ենք, որ թափանցիկությունը, էթիկան, ազնվությունը և հաշվետվականությունը կոռուպցիայի դեմ պայքարի և շուկայում բոլորի մասնակցության համար արդար հնարավորությունների ապահովման միջոցներ են: Ի պաշտպանություն վերոնշյալի՝ մենք հայտարարում ենք մեր մտադրությունը.</p> <ol style="list-style-type: none"> <li>1) զբաղվել պատասխանատու գործարարությամբ և ապահովել մեր համապատասխանությունը հակակոռուպցիոն միջազգայնորեն ճանաչված ստանդարտներին և Հայաստանի օրենքներին,</li> <li>2) արգելել աշխատակիցներին մասնավոր և պետական պաշտոնյաների ու կազմակերպությունների հետ ծավալելու կոռումպացված, կեղծ և ոչ բարոյական գործունեություն,</li> <li>3) գործել թափանցիկ, այդ թվում՝ բացահայտել տեղեկատվություն ընկերության իրական սեփականատերերի վերաբերյալ,</li> <li>4) ազնվորեն և հարգանքով վերաբերվել մեր աշխատակիցներին, հաճախորդներին, գործընկերներին և մատակարարներին,</li> <li>5) էթիկայի, համապատասխանության և գերազանցության միջոցով վաստակել համբավ,</li> <li>6) աջակցել շուկայական արդար պայմանների ձևավորմանը, բիզնես գործարքների թափանցիկության խթանմանը և Հայաստանում լավ կորպորատիվ կառավարման ապահովմանն միտված նախաձեռնություններին,</li> <li>7) մշակել վերը նշված սկզբունքները ընկերության հետ գործակցող բոլոր կողմերի՝ հաճախորդների, գործընկերների և մատակարարների, շրջանում տարածելու եղանակներ:</li> </ol>	<p>We, as members of the Armenian private sector, recognize that corruption is a major handicap to the country’s marketplace, as well as the continued success of our enterprises. We further recognize that transparency, ethics, honesty, and accountability are the means to combating such corruption and ensuring fair opportunities for all to participate in the market. In supporting of the foregoing, we hereby declare our intent to:</p> <ol style="list-style-type: none"> <li>1) Conduct all company business responsibly and in compliance with internationally recognized anticorruption standards and the laws of Armenia.</li> <li>2) Prohibit all employees from engaging in corrupt, fraudulent, and unethical activities with private and public officials and organizations.</li> <li>3) Introduce a transparent disclosure policy for the company’s operations, including transparency about those who are the true owners of the company.</li> <li>4) Treat our employees, customers, partners, and suppliers with honesty and respect.</li> <li>5) Earn a reputation for ethics, competence, and excellence.</li> <li>6) Support a nationwide initiative intended to create fair market conditions, promote transparency in business transactions, and ensure good corporate governance in Armenia.</li> <li>7) Develop practices to disseminate above principles to all parties within our company, as well as our customers, partners, and suppliers.</li> </ol>
<p>Ընկերություն .....          Պաշտոն .....          Ստորագրություն .....          Ամսաթիվ .....</p>	<p>Company: .....          Position: .....          Signature: .....          Date: .....</p>